

**ԲԱՌԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ**

Ի ասորերություն լեզվական նորարարությունների՝ խոսքային /անհատական/ նորարարությունները գերազանցապես ռճական, ադառհայտչական նախտակադրու-մով են կյանքի կոչվում: Վերջիններիս էության ըմբռնումն ամբողջական և համակող-մանի դարձնելու առումով առանձնակի կարևորություն ունի դրանց արտահայտչական դերի և ննարավորությունների բացահայտումը:

Ի՞նչ սկզբունքով ու նպատակադրումով է կատարվելու անհատական նորարարու-թյունների ռճական արժեքավորումը, դրանց արտահայտչական դերի բացահայտումը: Բնական է, որ այդ հարցը գրողները, բանաստեղծների լեզվի և ռճի ուսումնասիրությանը վերաբերող աշխատություններում այլ լուծում պիտի ստանա, քան այն դեպքում, երբ բառային անհատական նորարարություններն ուսումնասիրության նյութ են դասնում որպես գեղարվեստական խոսքի բառապաշարի առանձին մասնաշերտ: Նախ որ ոչ թուր գրողներն ու բանաստեղծներն են այնքան համապատասխանում նյութ արամստյաում, որ դա առանձին, համակալմանի քննարկման սուարլա հանդիսանա: Եթե անգամ որոշ գրողներ, բանաստեղծներ համապատասխան նյութ էլ արամադրում են, ապա դա ուշադրության առարկա է դառնում այլ խնդիրների տղըտում, ինչպիսիք են գրողի լեզվի ձևաբանական, շարահյուսական յուրահասարկությունները, բառապաշարի մյուս շերտերը (բարբառային բսաներ, հնարանություններ և աղն), խոսքի պատկերավորության միջոց-ները, առադչաիական հարցեր և աղն: Հասկանալի է, որ այդպիսի ընդգրկում ունեցող ուսումնասիրություններում ենարավոր էլ չէ անհատական նորարարություններին ալիի ծավալում տեղ հատկացնել: Անհատական բսաստեղծմսնը վերաբերող աշխա-տություններում բսասպաշարի այդ կարևոր մասնաշերտի՝ որպես ամբողջական իրողու-թյան ռճական արժեքի քննությունը սովորաբար կում ուղղակի աներաժեշտ չի համար-վում, կամ երկրորդ սլլանում է գտնվում: Նշված հանգամանքների հետանքով որոշակի մոտեցում չի մշակվել, թե ինչ սկզբունքով է կտարվելու անհատական նորարարություն-ների ռճական արժեքի բացահայտումն ու քննությունը:

Այնպիսի հարուստ նյաթի ուսումնասիրությունը, ինչպիսին 20-րդ դարի արևելու-հայ չափածոյի նորարարություններն են, բնականաբար առաջադրելու էր այդպիսի սկզբունքի որոշման աներաժեշտությունը: Նյութի ուսումնասիրությունը հանգեցրել է այսպիսի հետևության: Անատարկելի է, որ անհատական նորարարությունները խոս-քային իրությունն են, խոսքային միջավայրի պահանջով կյանքի կոչված բառեր՝ օժաված ռճական, արահայտչական դերով: Իսկ ի՞նչ է ալո *ռճական, արաա-հայտչական* ասվածը, եթե ոչ առաջին հերթին խոսքի դրական հատկությունների ապահովմանը նպաստելը: Հայանի է, որ այդպիսի հատկություններ են խոսքի սեղմու-թյունը, բազմազանությունը, բարեհնչությունը և աղն: Ուրեմն՝ երբ խոսք է գնում անհա-տական նորարարությունների ռճական արժեքի մասին, հիմնական ելակետ է ճանաչ-վելու այն հանգամանքը, թե դրանք ինչ դիր ունեն խոսքի այդ հատկությունների ապա-հովմանը նպաստելու գործում:

Հայտնի է, որ անհատական բնույթի նոր բառերը ոչ թե նոր երևան եկած առարկաների, երևույթների անվանումներ են, այլ հիմնականում հասկացությունը, երևույթը նոր ձևով արտահայտող լեզվամիջոցներ: Սա էլ մշանակում է, որ անհատա-կան նորարարությունները հիմնականում հանդես են գալիս որպես լեզվում գոյություն ունեցող համապատասխան իրակությունների հոմանիշներ: Կասկածից դուրս է, որ, օրինակ, *երջանկասփյուռ*-ը նոր բառ է:

Երջանկասփյուռ քո լույս-գիրկը բաց,

Ես սիրարորոք թռչում եմ դեպ քեզ /ԱԻ, 2, 76/:

Այս բառի աթահայտած հասկացությունը հոմանշային առնչության մեջ է գտնվում «երջանկություն աիոել» բառակապակցության հետ, ինչպես և, ասենք, *հոգե-օգուա* նորարարությունը՝ *հոգեշահ* բստի հետ:

Երգերը գլավիչ, մեղմ, *հոգևոգու...* /ԶԲ, 59/:

Որտեղ համանշտություն, այնտեղ էլ անհրաժեշտ լեզվամիջոցի ընտրություն և խոսքի բազմազանեցման հնարավորություն: Գոյություն անեցող լեզվամիջոցի վախճարեն մորաբանության գործածությունը գրողին, բանաստեղծին հնարավորություն է տալիս խոստովել շրջանառության մեջ եղած բառերի, բառակապակցությունների հաճախուսի գործածությունից, կրկնությունից:

Այդ իմաստով էլ միանգամայն հնարավոր կլինի, եթե ոճական արժեքավորման ժամանակ անհատական մորաբանություններն ուշադրության արժանանան որսվես *խառքի բազմազանությանը* նպաստող կտրուկ միջոց: Ուշագրավն այն է, որ մորաբանությունների միջոցով խոսքի բազմազանեցման ձգտումը երբեմն այսպիսի ակնհայտ դրսևորում է ունենում՝ վաղը ծավալի խոսքային միջավայրում:

Ժայռերի կրծքի վրայով ետսում էք երկինքը,

Եվ նրա *կապույտ քարքիչներից*

Սաղմոսներ էին թափվում անդունդների մեջ,

Երգի ծաղկաթերթերը չէին դժգունում

Կապտաքարքիչ երկնքի սև շուրթերի աակ /ՌԴՌ, 136/:

Նկատելի է, որ մի դեպքում հասկացաբանների ետարբերությունն արտահայտված է բուռնկապակցությամբ, իսկ մյուս դեպքում՝ մորաբանությամբ: Նույն իրողությունն ենք տեսնում նաև հետևյալ գործածությունում:

Առում են, թե չկար երկթում ոչ մի ծաղիկ՝ *սիրար սև*

Այն օրվանից աշխարհ եկտն կակաչները *սրտասև* /ՀԸՀ, 326/:

Հետևյալ քառասյուն համուպատասխան հասկացությամբ մի դեպքում արտահայտված է *բյուրասար*, մյուս դեպքում՝ *հագարասար* հոմանիշ մորաբանությամբ՝ նպաստելով խոսքի բազմազանությանը:

Գերի միայն Մոսկիտ չէ, իմ *բյուրասար*, իմ անգին,

Դու իմ Գրգուս, դու իմ Միվան, իմ Ծովսասար, իմ անգին,

Հագարասար իմ Հայաստան, եագարից մեկն է գիրկս,

Ու հագար է սիրաս դադում մեկիդ համար, իմ անգին /ՀԸ, Յոթ., 78/:

Անհասակաճ մորաբանությունները գործածության եանախականության առումով գրեթե անուշադրության մատնված լինելու պատճառով միայն կարող էր երևան գալ այնպիսի կարծիք, թե իբր դրանք կտրուկ են վնասել խոսքի բազմազանությանը, երբ մեկից ավելի գործածություն են անհնում, թե իբր այդպիսի մորաբանությունները որպես «պետական շաամայ» են եանդես գալիս¹:

Սեզ հայանի ավելի քան 250 մորաբանություններ, որոնք ունեն երկուսից մինչև ասար գործածություն և ոչ իմաստային, ոչ էլ ոճական առումով ընավ կրկնության, շաամայի տպավորություն չեն թողնում: Դրանց մեծ մասը հասկանչվում է իմաստային բազմերանգությամբ և ինքնաախյ գործածությամբ: Որպես օրինակ աշադրության արժանացնենք *հրաթև* բառը, որը մեզ հայանի է Հ.Թումանյանի, Վ.Տերյանի, Հ.Շիրազի գործածությամբ.

Կարոտ է հոգիս, թոչում է *հրաթև*

Այս մեմուսաանի բարձր պարսպից /ՀԹ, 2 26/:

Ոսկելուսիկ, օ՜, *հրաթև*, այնպես բոսոր

Փայլում ես դու /ՎՏ, 2, 37/:

Ճերմակ մագերս քանի սև էին՝

Աղջիկներն, ասես *հրաթև* էին /ՀԸԵ, 3, 151/:

Ինչպես կարելի է նկատել, մեզ հետաքրքրող բառը ասարթեր եևդիմակների կողմից իմաստային և շարաեյասական երսպի, առնչության մեջ է դրված ասարթեր բառերի եետ: Առաջինում սիրահարված արեդայի հոգին է հրաթև թոչում, երկրորդում «թագուհու պես աիրող» գեղեցկահին է հրաթև, երրորդում երիասասալից խուսաիրող աղջիկներն են երաթև: Թումանյանից ըերված օրինական բառի նշանակության մեջ սաաջին

¹ *М. Б а к и я, Потенциальные слова, мотивированные прилагательными, в современной поэзии; - Слово в русской советской поэзии, М., 1975, էջ 135:*

պլանում է գտնվում արագության, շաապողականության իմաստային ասանք: Տեղյանական գործածության մեջ իշխողը հրեղենության գաղափարն է. այդ գեղեցկուհիս ոսկեկուսիկ է, «այնպես *բոսորի* խայտում է», բանաստեղծության եաջող առկերում ներկայացվում է *արեգակ*, ուղղակի՝ *հրեղեն* («Ինքդ արեգ...», «Օ, հրեղեն, չար արեգակ, ում որ նայես՝ Այրում ես դա»):

Շիրազյան գործածության մեջ բառիմաստի ձևավորման հարցում ավելի կարևոր դեր ունի նորաբանությունը երկրորդ բաղադրիչը, այսինքն՝ *թև* բառը՝ բառիմաստի մեջ որպես հիմնական հասկացություն ներկայացնելով թռչելու, եռոտանալու, փախչելու գաղափարը: Կարծում ենք՝ միանգամայն իրավացի կլինի, եթե ընդգծվի, որ *հրաթև* նորաբանության այս գործածություններում «պոետական շտամպի» նշույլ անգամ չի կարելի նկատել:

Հրաթևում բառը Վ. Տեղյանի բանաստեղծություններում *վերք* բառի լուսցում է, Ս. Տարոնցու բանաստեղծությունում՝ *կույս* բառի. Արդյոք բոցն փարդե՞րդ են վառ, Թե՞ վերքերն իմ *հրաթևում* /ՎՏ, 1, 249/: Եվ երազում է չքնաղ, բողբոջ կույսեր *հրաթևում* /ՍՍՄ, 53/:

Ե. Չարենցը *գալիքնարեք* է եամարում իր ժամանակը, իր օրերը, Հ. Շիրազը՝ Ասածուն. Եվ առաջին խորհուրդս, որ եղում եմ կարմիր Մեր օրերից այս բոքր ու *գալիքնարեք*... /ԾԶ, 4, 395/: Եվ լույ մի բան կուզեի *գալիքնարեք* ասածուց՝ Որվիններս իրենց եոր անսած կյունքը չանենեն /ՀԸ, ԶՀ, հ.3, էջ 351/:

Երկնածին նորաբանությանը Հ. Թումանյանը բնութագրում է սիրանաբված արեդայի սիրո առարկան, Վ. Տեղյանը՝ քնարական եերոտի անուրջները. Եվ հանկուսրծ կսնգնեց նրա գլխի մոա Լուսեդեն մարմնով մի կույս *երկնածին* /ՀԹ, հ.2, էջ 12/: Անուրջներս *երկնածին* գնացին, գնացին... /ՎՏ, հ.1, էջ 33/:

Անհասական նորաբանությունները կարևոր դեր ունեն մաև խոսքի սեղմության ասրսեովմուն, լեզվի մեջ գործող խնայողության սկզբունքի դրսևորման առումով: Այդ իրողությունն ավելի ակնհայա է դառնում, երբ պիավում է փոխակերպման հայեցակետով:

Բաղադրյալ բառերն ուշադրության արժանացնելով դերբայական դարձվածի՝ նախադասության եեա ունեցած առնչությունների մեջ՝ Գ. Ջաեուկյանն առաջինների համար հատկանշական է համարում հարաբերությունները, հասկացություններն «ավելի համառոա ձևով» արաանայաելու կարողությամբ օժաված լինելը: «Այն հարաբերությունները, որոնք արաանայավում են դերբայական դարձվածների միջոցով, ավելի համառոա ձևով կարող են արաանայավել բաղադրյալ գոյականների, ածականների և մակբայների միջոցով»²: Մաշյա բարդ բառը փոխարինում է սր ամբողջ բառակապակցության՝ «սև աչքեր ունեցող» (սևաչյա կին) (ն.ա.):

Անհատական նորաբանությունների մեջ կան այնպիսիները, որոնք խոսացնում են հարուսա բովանդակություն: Այդպիսին է, օրինակ, *ասավածախանդ* բառը՝ որպես Գր. Նարեկացուն բնութագրող մակդիր. Այսանդ է մեզ պյութել *ասավածախանդ* Նարեկացին /ԼՁ, ԱՍ, 193/: Ընդգծված բառի մեջ խոսացված է սր բովանդակություն, որ ամենասեղմ ձևով ասած՝ Նարեկացուն ներկայացնում է որպես խղեսղական կաաաբելության ձգսաղ, այդպիսի կատարելության հարցում Աաածո հանդիպ բարի նախանձ աածու, ասավածային բացառիկ խանդ, եոգեկան աանջալից ապրամներ ունեցող անգուգական երևույթ: Ավել կամ պակաս չափով խաացումներ, բովանդակությամբ հագեցված, ուարողունակ բառեր են մաև *մանարնջուկ*, *այրբենաթուր*, *հազարազանձ*, *եղեռնուզարկ* և այլ նորաբանություններ:

Շուրով շողա երկնաշնորհ, Օշականում շուշանարույր,
Պատյան չունի՝ Թուր-կեծակի հայոց լեզուն *այրբենաթուր*...

/ՀԸ, ԶՀ, հ.2, էջ 221/:

Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզուն *հազարազանձ* /ՄԿ, 44/:

² Գ. Ջաեուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության միմունքները*, 1974, էջ 563:

Բանաստեղծական զգացումը խառնված ձևով արտահայտելու, զեղարվելու-տական խոսքի սեղմությամբ նախաստեղծ առումով կարևոր են նաև հատուկ անուն-ներից կազմված նորարարությունները: Խոսքն հաակապես այն հատուկ անունների մասին է, որոնց կրողները սրբացված դեմքեր, իրարսրծություններ են մեր ժողովրդի ու մշակույթի լուսավորության մեջ: Այդպիսի նորարարություններ են՝ *ավարայրվել, վար-դանվել, կոմիտասվել, անդրանիկվել* և այլն:

Մանով իրկեն հայրենին,

Ավարայրվեն դեռ դուրեր... /ՀԸ, ՀՄ, 172/:

Վարդանվելով՝ այս էլ ահա տասն ու վեց դար անդադար *Մասիսվել* է, - տես ինչու չի մահանում հայ ռզին /ՀԸ, ՅՌ., 39/: Եվ անցնում էինք եղեռնին ի տես. Կանցներինք, կարծես, *կոմիտասվելով*... /ՀԸ, ՀԴ, 85/:

Մյուսն քառ-խորհրդանիշ են, արտահայտում են ոչ թե սովորական իմաստով հասկացություն, այլ մարմնավորում են գաղափարներ, մտքերի խոսացումներ են:

Ընդունված կարծիք է, որ լեզվում դրսևորվող կրճատումները, նույնիսկ «երն-չյունների կրճատումը տնտեսման ձգտումի արտահայտություն են»¹: Բառերի կրճատ ձևով գործածությունը, բաղադրյալ բառակազմի փոխարեն արմատի գործածությունը, որ նկատելի աեղ ումի գեղարվեստական խոսքում, նախատակադիված է ոչ միայն խոսքի քարմության, այլև սեղմության ապահովմանը: Նշենք հումապատասխան մի քանի գործածություն: Հի լսում *սասաի*, ոչ էլ խրուսի /ԱԻ, հ.2, էջ 84/: Միրսա, ծերանում ես դու, քայց քո գեղերն էլ է *ջեռ*: Գնացեք, - ասաց, - Չեր երկրում *կեզ* Ապրեք զատո, ապրտստով վես /ԵԶ, հ.4, էջ 199, հ.3, էջ 426/: Օղանսպերի *շաշը* արուգ /ՄԱ, 14/:

Հաակապես չաիածո խոսքի կարեոր հաակություններից մեկը բարեննչու-թյունն է, որի ախոսեովման հուրցում ևս նորարարությունները մեծ դեր ունեն: Այս դեպ-քում նկատելի է առնվում ոչ միայն նորարարության հնչյունական կուզմը, այլև դրա նեղաշմակությունը բանաուղերի հնչյունական շղթաի եես:

Խոսքի բարեննչության սուղահովման գործում անհասական նորարարու-թյունների կարևորությունը դրսևորվում է հաակապես առձայնության, բաղադայնության ստեղծման, հանգստորման հարցում: Հանգստորումը սովորարար ապահովվում է լեզ-վան ռուութում ունեցող բառի և նորարարության գուզակցումով /*կայծակնացան* - ծիածան, *ծովական* - գովական /ԸԶ, ԱՄ, 55, ՄՄՄ, 101/:

Սակայն բանաստեղծական խոսքի բարեննչությանն աու:վել չափով է նախա-սում այնպիսի հանգստորումը, որն արտահայտված է չինում միայն նորաթա-ու-թյուններով, ընդ որում այդպիսի հանգստաուեր կարող են չինել ոչ միայն երկուսը, այլև՝ երեքը: Նկատվում է, որ այդպիսի կիրաություն ունեցող նորարարությունների վերջին քաղսուրիչը հաճախ նույն քառով է արտահայտվում՝ *սևութ* - *խութ*, *սևաշուք* - *գաևաշուք*, *գեղիքան* - *մեղմիքան*: Աշխարհ, ես էլ գիշեր ունեն *սևութ*, Գա-րուն ունեն, ծրմեռ ունեն *խութ* /ԳՄ, 12/: Արշալույսը մահանում է վերջալույսին *սևա-շուք*, Վերջալույսն է վերածնվում արշալույսին *գաևաշուք* /ՀԸԵ, հ.1, էջ 299/:

Խոսքի բազմազանությանը, քարմությանը նախասուերու ուռումով սալելի կարևոր է աարբեր վերջնուրաղսայիչներ ունեցող նորարարություններով դրսևորված *հանգա-վորումը*, *ինչպես՝ ախրանուշ* - *դառնահուշ* /ՀԸ, ԶՀ, հ.2, էջ 134/, *շների հուչ* - *հողմաշուչ* /ԸԶ, ԱՄ, 121/, *մարդուրեր* - *համբեր* /ՀԸԵ, հ.2, էջ 302/ և այլն: Օրինակ՝ Իսկ շուրջը վիթ-խարի այդ բուրգի, մշուշում, բոնած *խալապար* Թռչկուսում էին ու պարում ավերված քաղաքներ ու շեներ, - Եվ երբի ելած նրանց եես՝ սոմեհի խանդով, *խալապար* Թռչկո-աում էին ու սլորում նախիրներ պատում ու շներ /ԵԶ, հ.4, էջ 265/: Եվ իրկումն անգամ *ինչու*՝ այսքան կարճ է, *տխրանուշ*, Գիշերն ինչու՝ է, ալ ասաված, անվախճան ու *դառ-նահուշ* /ՀԸ, ԶՀ, հ.2, էջ 134/: Ինչ որ չունեն եղմիկները *գեղիքան*, Զո մեջ գաա, քու եղ-միկից *մեղմիքան* /ՀԸԵ, հ.3, էջ 106/:

Խոսքի բարեննչություն աուումով նորարարություններն իրենց նախսում են բերում հնչյունական կրկնության այնպիսի կարևոր եղանակներում, ինչպիսիք են բաղադայնություն և առձայնություն: Նման դեպքերում նորարարությունները հանդես են գալիս հնչական բնդիանություն ունեցող սովորական բառերի միջավայրում: Այդպիսի

¹ Новые слова и словари новых слов, Ленинград, 1978, стр. 81.

գործածություններում մի դեպքում գերակշխ է նորաբանությունների, մյուս դեպքում՝ սովորական բառերի դերը:

Լուսաշաղ, հուսաշաղ ջինջ շողին

Անհատալ ընդատաջ ես կերթամ /ԵԿ, 251/:

Ծափ ու ծիծաղ ու ծաղկածո պ ծիծառն /ՀՀԲ, գիրք 1, էջ 15/:

Ինչպես կարելի է նկատել, սաաջին դեպքում հնչյունական կրկնության ապստեղծման գործում առավել կարևոր դեր ունեն *լուսաշաղ, հուսաշաղ, անհատալ* նորաբանությունները, երկրորդ օրինակում՝ *ծափ, ծիծաղ, ծիծառն* սովորական բառերը, որոնց միջավայրում *ծաղկածո* նորաբանությունը հնչյունական կրկնության գորագմանը նպաստող դեր ունի միայն: Նշենք համապատասխան մի երկու գործածություն էլ:

Վշառեաք, վշառտ, վշասունեղ,

անաաան բառերի շարքով

թող Ագաան ագաա-վշաունե ԽԶ, հ.2, էջ 40/:

Բանաստեղծական խոսքի կարևոր հատկություններից մեկը կենդանությունն է, որի շնորհիվ երևույթի նկարագրությունը, ապրումի գեղարվեստական մարմնավորումը կոնկրետ, կենդանի դրսևորում է ունենում: Խոսքի այդ հատկությանը նպաստելու իմաստով ուշագրավ են հատկապես այնպիսի նորաբանությունները, որոնք օժտված են գործողության նշանակությամբ, նկարագրվող առարկան ներկայացնում են շարժման մեջ: Մեր լեզվում առանձին դժվարություն չկա գետի, լճի, ծովի նկատմամբ ժայռի ունեցած դիրքի արտահայտման իմաստով: Նման դեպքերում սովորաբար գործածվում է *կախվել* բայը՝ «Կախված է ժայռը ջրերի վրա...» /ՀՀԵ, 26/: Հ. Մահյանի բանաստեղծություններից մեկում էլ այդպես է՝ «Կախվել է ժայռը...» /ՀՄ, 303/: Բայց Հ. Մահյանն այդքանով չի բավարարվել, կամեցել է մասնավորել նկարագրությունը, և բերված արտահայտությանն անմիջապես հաջորդել է մեկ ուրիշ եռմանիչ կապակցություն՝ «Կախվել է ժայռը, *կորընթաց* իջել...»: Ընդգծված բառը չկա Մտ. Մսիսյանյանի բառարանում, Ժամանակակից եայերենի բացարձակ բառարանում էլ միայն Հ. Մահյանի այս օրինակով է արված /անհ. հ.2, էջ 196/: Մեր սովորական բնորոշումով շարժումը չի սանձվում ժայռի հետ: Բայց ընդգծված նորաբանության շնորհիվ անշարժության խորհրդանշի հանդիսացող ժայռը շարժման մեջ է ներկայացվում և ասես կենդանուգրված է ընթերցողի հիշողության մեջ: Եվ դա շնորհիվ այն բանի, որ նորաբանության երկրորդ բաղադրիչն արահայտված է ընթաց(ք) բայանունով:

Ուշադրության արժանացնենք նաև այլ գործածություններ:

Թոնիրն էի հիշում, որ առավոա կանուխ

Միշա լեցուն էր լինում մի շեկ հրախաղով

Ու լեցուն էր լինում թթխաներով կապույա /ՎԴԱ, 214/:

Համապատասխան երևույթն ուշադրության արժանացրած ընթերցողը լավ կգգա, քի ընդգծված նորաբանությունն ինչպես կենդանի պատկերով է ներկայացնում քիժ պահին բռնի մեջ թրթռացող դեղնակարմիր և կապույա բոցերի լեզվակների խաղը:

Խոսքի կենդանությանը նպաստում է նաև նորաբանության և դրա համագործակցական եռմանիչ բառի համառեղ գործածությունը: Ծիծաղով հնչում ու *արծաթածայն* Միանում է նա կրկին շարքերին /ԵԶ, հ.4, էջ 105/: Ինձ ափ հանեց դողդոջ մի ձեռք, ախ, ձյունորակ, ճերմակ մի մազ /ՀԸ, ԳԽՄ, 20/: Ինչքան *կառափնեց*, գլխաահեց ինչքան՝ Ինչքան *կործանեց*՝ կառաղեց այնքան /ՀԸԵ, հ.1, էջ 110/: *Արծաթածայն, ձյունորակ, կառափնեց* նորաբանությունների և դրանց եռմանիչ *հնչում, ճերմակ, գլխաահեց* բառերի համառեղ գործածության շնորհիվ ընդգծվում է համապատասխան հասկացությունը, աաըբեր նրբերանգներով է արահայտվում դա, և գորեղսնում է խոսքի ներգործուն ուժը:

Խոսքի կենդանության, ներգործուն ուժի գորագման միաումով է, որ գեղարվեստական խոսքում, հատկապես չափածոյում այնքան կենսունակություն են ցուցաբերում համասարտական հարաբերությամբ և նույն արմատի կրկնությամբ կազմված նորաբանությունները: Այդպիսի բաղադրյալ ձևերի համար բնորոշ է իմաստային սասուկությունը, հասկացությունն ընդգծված ձևով արտահայտելը: Դրանց յուրաքանչյուր բաղադրիչով արահայտված հասկացությունն առանձին է ուշադրության արժանացվում, և աուես մեկ բառով միանգամից երկու հատկանիշ է արահայտվում. Աշ-

խարհի ծայրն ընկած մի գորշագորշ քաղաք... /ԵԶ, հ.4, էջ 132/: Չարմանահրաշ մի մշտանանդես... /ՀԵԵ, հ.2, էջ 32/: Փշում էլ աշնան քամին ցրաացորա... /ԳՄԵ, 65/: Բո նվազն ալելի է դառնում քնքշանորր /ԼԴԲ, 275/ և այլն:

Մեծ է անհաասական նորարարությունների կարևորությունը գեղարվեստական խոսքի պատկերավորության ապստոլման գործում: Եվ դա պայմանավորված է Լրկու հիմնական հանգամանքով: Նախ որ դրսեց գրեթե զգալի մասը հարաբերակից է պատկերավորության միջոցների որոշ անսակնորհմ, և ապա՝ դրանք ուղղակիորեն հանդես են գալիս որպես խոսքի պատկերավորության միջոց:

Նորարարությունների հարաբերակցությունը որոշ տեսակի պատկերավորության միջոցների հետ այսպիսի ալոտանալության ունի: Եթե սովորական համեմատությունն արաահայալում է բառերի ազատ շարահյուսական կապակցությամբ, ապա, օրինակ, *հողմատույր* նորարարությունը հանդես է գալիս որպես բուռնալիս արտահայտություն ունեցող համեմատություն:

Հագած *հողմատույր* թևեր երկուսն՝
Վայրէջքի կգա քո Լրկուի վրա... /ՄԿ, 19/:

Ընդգծված բառի մեջ որոշակիորեն առկա է համեմատության խմուս, «հույմի պես սուրացուր» նշանակություն, այսինքն՝ նորարարությունը հանդես է եկել որպես բառային համեմատության: Այլ ձևով ասած՝ համեմատությունը, որպես պատկերավորության միջոց, ալոս պարագայում փոխակերպված արտահայտություն ունի, դրսևորված է մեկ բառի մեջ: Համեմատության հետ առնչվող նորարարություններն այնքան հն օժտված սլոգ պատկերավորության միջոցի դերով, որ ոչ սակավ դեպքերում վոխսնեվոխ են հանդես գալիս՝ որոշ դեպքերում ծառույելով նաև խոսքի բազմազանեցմանը:

Երգը շուտու կայծակնաձև,
Ծիածանի պես հուրհուրա /ԼԶ, ԱՄ, 113/:

Հեշա է նկատել, որ ընդգծված նորարարությունը նույն արտահայտչական դերով է հանդես եկել, ինչ որ «ծիածանի պես» կապակցությունը երկրորդ տողում: Արծվի և ճախրելու զադավարը Ն. Չարյանն ուրտահայտել է համեմատության միջոցով՝

Տեսա, հոգին քո ցասմայից
Վեր է ճախրում արծվի նման /ն.ա., էջ 131/:

Իսկ Հ. Շիրազը՝ նորարարությամբ՝

Ճախրեն հայոց սղավմի հորովելներն արծվորեն /ՀԵԵ, հ.2, էջ 274/:

Ինչպես այլ կարգի բառերի, այնպես էլ անհաասական նորարարությունների ոճական արաահայալականությունը ցայաան արաահայալություն է ունենում ոչ միայն հոմանշային, այլև հականշային հարաբերությունների ոլորաում: Նորարարությունների հականշությունը կարող է դրսևորվել և՛ միմյանց, և՛ սովորական բառերի հարաբերությամբ և հանդես գալ որպես հակադրության առանցք:

Հույսն ու անհույսն՝ խինդն ու վիշար ոգու հիմն հն՝ իմ հոգում,
Կերթան-կուգան և մշտավեհ, և ճղճիմ հն իմ հոգում /ՀԵԵ, 1, էջ 342/:

Կնոջ նման գաղանապղաոր, թե՛ մոր նման ջինջ է գինին /ՀԵԶ, 137/:

Ինչպես նկատելի է, այս օրինակներում հականշությունը դրսևորված է նորարարությունների (մշաավեհ, գաղանապղաոր) և սովորական բառերի միջև: Իսկ հեակալ գործածությունում որպես հականշներ են հանդես գալիս երկու նորարարություններ:

Մերթ շուկա ես մշաաժխոր, մերթ մշաանդորր տաճար /ՀԵԵ, 2, էջ 103/:

Երկու դեպքում էլ հականշությունը կուրևոր դեր ունի խոսքի այնպիսի պատկերավորության միջոցի դրսևորման հարցում, ինչպիսին հակադրություն է, որը հակադիր իմասա ունեցող բառերի գուգադրության վրա հիմնված բանադարձում է:

Խոսքի պատկերավորությունն թարմուցման, հակապիր գգացումների համաանդ արաահայալման առումով հակումիշ նորարարությունների հետ բավական սերա առնչություն ունեն այնպիսիներ, որոնք կազմված են հակադիր նշանակություն ունեցող, առաջին եայացքից իմասաով միմյանց ոչ համապաասալաոն թվացող բադսորիչներով: Ահա համասրուտսխոսն մի քանի օրինակ՝ Տարավ դառնանուշ աանջանքը սիրո /ՀԵՀ, 184/: Ով հանճարեղ իմ վայրկյաններ, այցելեցեք ինձ հաճախ, Որ գեղգեղա վանդակում էլ իմ սոխակը ախրուրախ /ՀԵ, ԶՀ, 2, էջ 141/: Ա՛խ, դառնանուշ իր կույր սիրո չճաշակած բարն է գովում /ՀԵԵ, 3, էջ 184/: Դեռ իր լորանուշ ծիծաղը լսեն /ն.ա.,

131/։ Երևույթը ներկայացնելով իր ասարարությունը, եակոպիքը եսակություններով՝ այսպիսի նորարարություններն անմիջապես ուշադրություն են գրավում, խոսքն օժտում են քարնություններ։

Խոսքի պատկերավորությանը նպաստելու առումով ուշագրավ է երգիծական բնույթի նորարարությունների դերը, որոնք ճնշող մեծամասնությամբ մեղմ հումորի, եեզմանքի արասեայաման միջոց են։ Սուր երգիծական շնչով է հագեցած Մ. Նալբանդյանի «Սատանայի պաշտոնակալն մեծ հանդես» սանդղագործությունում Տեղ Սատանային ուղղված խոսքի մեջ գործածված կոչականն իր լրացումով՝ *ամենամոռայապառվելագունեղ* անը /ՄՆ, ԵԺ, 1, էջ 377/։ Յուրօրինակ ինքնահեզմանքի համար է, որ բանաստեղծը ենարել է *տնեհացավ* բառը։

Այս նախորդված ճանապարհն անցա

Եվ անեհացավն ինձ էլ պաշարեց /ԱԵԲ, 60/։

Առանձնապես մեծ է կոտակային բնույթի նորարարությունների դերը երգիծական սանդղագործություններում, պարոդիաներում։ Իր մի քանի եկամայի պարայիաներում, ուր ցանկումնում է ցույց առնել, թե «Քեռին եկավ մեր բակը» մանկական ոտանավորի քննան իր գրչակիցներից ով ինչպես կմարմնավարեր գեղարվեստորեն, Գ. Էմինը երգիծական դերով գործածել է այսպիսի նորարարություններ՝ *մածներգություն, քեռանման, ֆելիեռնել, մածնակաթ* և այլն /ԳԷ, ԵԺ, 2, էջեր 234, 237, 239, 238/։ Մրանք քեռայի մարմնավորման Պ. Սևակի, Գ. Սարյանի, Ս. Վահուհու, Ն. Ջաբրյանի աարքերակներում են գործածված։ Դժվար չէ նկատել, որ ստաջին նորարարությունն սանդղված է Պ. Սևակի «Անհաշա մաերություն» խարագրի համարանությամբ՝ *Անհաշա մածներգություն*։ Երկրորդ նորարարությունը գործածված է եետկյուլ սաղելում։

Ո՞վ ծնեց այս *քեռանման* պառանին,

Ո՞վ է կտրել ծայրը նրա պարանի /ն.ա., էջ 237/։

Ակնեայա է այս առդերի աղերսը Գ. Սարյանի «Ո՞վ է ծնել շողշողուն այս պառանին» նախադասության եետ։ *Ֆելիեռնել* բառը Ս. Վահուհու խոսքում է։

Եվ ես ջարդեցի քեռու կնուրը,

Ֆելիեռնեցի քեռուն աջ ու ձախ... /ն.ա., էջ 238/։

Մածնակաթ նորարարությունը Ն. Ջաբրյանի աարքերակում է գործածված, որանեղ խոսքը ոճավորված է նաև նրա սանդղագործությունից վերցված *հողմաշառաշ* նորարարության գործածությամբ։

Քեռին ի բա՛ց վանեց մածունը *հողմաշառաշ*,

Եվ որոտաց.

Հայո՛ց քաջեր, առա՛ջ... /239/։

Խոսքի պատկերավորությանը նպաստելու առումով ուղղակի բացատիկ կարևորություն ունի նորարարությունների մակդիրային կիրառությունը մասնավորապես նաև այն բանի շնորհիվ, որ դրանց մեծ մասը հանդես է գալիս եենց սուղայիսի գործածությամբ։

Ինչպես գիտենք, մակդիրի եիմնական յուրահատկությունն այն է, որ արասեայանում է երևույթի, առարկայի ոչ թե սովորական, մնայուն, արամարանական բնույթի, այլ նոր, միմյալ տվյալ երևույթի համար սովորական չհամարված հասկանիշ։ Եթե մակդիրի համար հատկանշական է համարվում երևույթը նույն կողմով լուսավորելը, ուրեմն նորարարությունների մակդիրային գործածության կապակցությամբ ուշադրության կենարումնում է գանվելու նորի, նորության հարցը։ Այդ իմաստով էլ նպաստականարմար ենք գանում մակդիրի գերով գործածված նորարարություններն ուշադրության առարկա դարձնել հասկանալիս այսպիսի եայեցակետով՝ 1/ դրանք ի՞նչ դեր ունեն գոյություն ունեցած առարկաները, եայտնի երևույթները նոր հտականիշներով ներկայացնելու գործում, 2/ դրանց միջոցով ժամանակի գեղարվեստական մատնողության մեջ ու սչ արձագանք են գանում կյանքում, գիտության, գրականության մեջ նոր առաջացած կարևոր իրադարձությունները։

Նախ՝ առաջին եարցի մասին։ Անհասական բնույթի նոր բառը կարող է օժավում չլինել երևույթը նոր կողմից լուսավորելու կարողությամբ։ Այդպիսին են, օրինակ, եետկյուլ ընդգծված բստերը՝ *ալիուրդոշակ* /ԱՎ, ԵԺ, 109/, *աղմկահունգետ* /ՄՄ, 139/, *վշամաշ* սիրա /ԱԵԵ, 65/, *սիրագեղգեղ* բլրուլ /ԵԿ, 234/ և այլն։

Միանգամայն այլ արժեք ունեն այնպիսի նորարարությունները, որոնք օժտված են եռուսկուն, զգացական վերաթերմունքի արասեայաման կարողությամբ, ակտիվ ստեղծագործական աշխատանքի եեակտնք են, խառքի բանաառեղծականացման կուրևոր միջոց: Այդպիսի բառերի երևան գալու եարցում կուրևոր դեր ունի եեղինակի ստեղծագործական խառնվածքը: Վ. Տերյանի նման բանաստեղծը կարող էր աշնան գալը պատկերելու եամար կերտել *միգասքող*-ը, վերակենդանացնել *ոսկեհանդերձ*-ը, աշնան եեա առնչել մետաքսի գաղափարը: Այժմ մեզ եեաաքքքքող խնդրի սառնումը առավել կարևորն այն է, որ այդ մետաքսը քնորոշվել է ծայնային այնպիսի եաականիշով, որը նոր է, ինքնաաիպ և ոչ միայն սախրական մաեկտնացուի լսողության եամար:

Ոսկեեանդերձ եկար և միգասքող,
Տխուրաչա աշուն, սիրուն աշուն,
Տերևներդ դանդաղ թափվող ոսկով,
Մեաաքսներով *քնքաշրշուն*: /ՎՏ, 2, էջ 15/:

Նուրբ բանաառեղծական զգացողության շնորեիվ միայն մութը կարող էր սառնաթև լինելու եանգամանքով քնորոշվել, երաղանքի բազմերանգությունը ներկայացվել *ծիածան* բառով կտղմված բաղալարությամբ:

Լույսերը մեաան,-
Մութը *սառնաթև* գրկեց ամեն ինչ... /ՎՏ, 1, էջ 264/:
Հոգուդ մեջ բարակ
Շղարշներ էին
Ծիածանաթև երազանքների... /ՄՄ, 66/:

Այսպիսի նորարարություն-մակվիրներ առեղծվում են, որ դրանց մակադրյալով արտաեայալված երևույթները մեզ անծանոթ չման իրենց եամապատասխան եաականիշներով: Դրանց նշանակությունը նաև այն է, որ եարաուացնեն մեր գեղագիաական ըմբռնամներ, այլև խորացնեն եավաաը մեր լեզվի արտաեայալական եարուստ եմաըալորությունների եարցում: Այդ եմարավորությունները գրեթե անսզառ են, ի եայա բերելու եարցում ձիրք ու նպատակամիտվածություն, այլև սաեղծագործական համարձակություն է սլետք:

Աաակերն իջել են Վանա ծովին ու ջուր էին դեռ խմում,

Մինչդեռ կույսը *սիրածարավ*՝ արցունքի ծովն էր քամում /ՀՇԵ, 2, էջ 22/:

Կույսը *Խջեգարեն* է՝ այն եուգեկտն պիճակում, երթ արդեն երեք տարի է, ինչ Սիվանից փաարված Միսմանրուից ոչ մի լուր չունի և նրա կարաաուլ է տանջվում: Հ. Թումանյանին շաա է դուր եպել «սերը - քաղց է» արաաեայաությունը: «Բայց որքան դյուր եկավ,- շարունակում է Թումանյանը,- այնքան էլ ծանոթ թվաց: Չէ՞ որ մենք էլ ենք աաում, թե կշաացանք - կարաաը, սիրո, կրքի եագուրդն առնելու մաքով...» /ե. 5, էջ 212/:

Սիրածարավ՝ բստի եայանությունը, այն էլ այդպիսի աեղին գործածությամբ լիալին եիմք է աալիս սերը ճանաչելու նաև իրրև ծարավ, ծարավանք: Իր այս պաեի զգացումներով *Խջեգարեն* սիրո ծարավից տապակած չէ՞, կարաաից սաչորված չէ՞, Սիամանթայի վերադարձը գովություն չպիաի՞ պուաճառի նրա եոգան, ինչպես լեռան սառնադրյուրի ջուրը՝ ամռան աապին լեռներալ անցնող պապակած մաքդուն:

Այժմ՝ եամառաակի այնպիսի մակվիրային գործածությունների մասին, որոնք պայմանավորված են ժամանակաշրջանը քնորոշող իրադարձություններով, գլաական կյանքում երևան եկած, իշիաղ ուղղությամբ, սաեղծագործական մեթուրով:

Հայանի է, որ 20-րդ դարի 20-30-ական թվականների չաիաճալում բավակուն քարձր եաճախականություն ունեն *երկաթ*, *եթաբուխ* և այդ բնույթի բառերով առեղծված նորարարությունները: Աեա մակվիրային գործածությամբ այդպիսի մի քունի բառեր: *Երկաթաբալլ* բանակ, *երկաթաղեմ* կեսօր, *երկաթաթերթ* վարդեր, *երկաթավորվող* եայրենիք /ԵՉ, 4, էջեր 297, 58, 129, 19/, *երկաթաճայն* քայլեր, *երկաթաճայն* երգ /ԳՄ, 45, 141/, *երկաթուղոր դաթ* /ԳՄԵ, 119/ և այլն:

Տիեզերքի մվաճման գեղաըվեսաական արձագանք եանդիսացող ուշագրավ մակվիրային գործածությամբ նորաթանություններ կան եաակապես Մ. Մարգարյանի, Հ. Շիրազի սաեղծագործություններում: Դրանք քանաստեղծաշունչ, խոսքի քարմությունը նպասաող լեզվամիջոցներ են՝ օժտված մակադրյալի բովանդակությունը նոր

ընկալումով ներկայացնելու կարողությամբ: Տիեզերագնացությունն առիթ հանդիսացավ, որ Հ.Շիրազը գաներ ռանասահղծակն ինքնաբացահայտման մոր եղևնակներ:

Դու ես առաջին *տիեզերաթիռ* էակն, ով բանաստեղծ,

.....
Սրանով ես դու սեփ, պոեմ, *տիեզերատիպ* էլուլե... /ՀՇԵ, 2, էջ 107/:

Ես *լուսնահաս* իմ դարի խոհերի խոհն եմ... /ն.ա., էջ 123/:

Տիեզերագնացության շրջանի անհատական մորարարությունները Մ. Մարգարյանի պոեզիայում էլ հիմնականում ռանասահղծակն ինքնաբացահայտման դերով են հանդես գալիս: Նրա քնարական հերոսը «մաքուր, մաքուր ու *լուսնահաս*» է /ՄՄ, 24, 102/, նրա սերը *աստղածին* է /ն.ա., 21/, օժտված է *աստղատարազ* հիացումներով /ՄՄ, 11, 141/, *աստղագիր* ըստիսի սեր է /ՄՄ, 11, 141/, երջանկության *աստղե* ճամփաներ փնարելու ահնջով է համակրված /ն.ա., 105/ և այլն:

Համառոտագրություններ

ԱԻ - Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, 1973, հ.2, 1974:

ԱՇԵ - Ա. Շառուրյան, Երկեր, 1948:

ԱՇԲ - Ա. Շեկոյան, Բախտ, 1987:

ԱՇԱ - Ա. Շեկոյան, Անապոնգի, 2000:

ԱՎԵԺ - Ա. Վշաունի, Երկերի ժողովածու, 1948:

ԳԷԵԺ - Գ. Էմին, Երկերի ժողովածու, հ.1, 1975, հ.2, 1977:

ԳՄԵ - Գ. Սահարի, Երկեր, 1954:

ԵՉ - Ե. Չարինց, Երկերի ժողովածու, հ.1, 1986, հ.2, 1986, հ.4, 1968:

ԼԴԲ - Լ. Դուրյան, Բերդ, 1983:

ՀԹ - Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.1, 1950, հ.2, 1940:

ՀՀԲ - Հ. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, 1971:

ՀՀԵ - Հ. Հովհաննիսյան, Երկեր, 1959:

ՀՇԵ - Հ. Շիրազ, Երկեր, հ.1, 1981, հ.2, 1982, հ.3, 1984, հ.4, 1986:

ՀՇՀԴ - Հ. Շիրազ, Հայոց գանրեական, 1990:

ՀՇՅՈՐ - Հ. Շիրազ, Յոդնապատում, 1977:

ՀՇԶՀ - Հ. Շիրազ, Զմար Հայաստանի, հ.1, 1958, հ.2, 1964, հ.3, 1974:

ՀՍ - Հ. Սահյան, Հայաստանի երգերի մեջ, 1962:

ՀՍՎ - Հ. Սարուխան, Վկայություն, 1989:

ՄԱ - Մ. Արմին, Երկարավարվող երկերի հրգեր, 1927:

ՄՄ - Մ. Մարգարյան, Բանաստեղծություններ, 1978:

ՄՄ, 24 - Մ. Մարգարյան, Չնհալից հետո, 1965:

ՄՆԵԺ - Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, հ.1, 1940:

ՆԶԱՍ - Ն. Ջառյան, Արև ու սավեր, 1957:

ՇԿ - Շ. Կուրդինյան, Երկերի ժողովածու, 1947:

ՋԶ - Ջիվանու քնարը, 1959:

ՌԴՌ - Ռ. Դավոյան, Ռեքվիեմ, 1969:

ՍԿ - Ս. Կապուտիկյան, Յոթ կայարաններ, 1966:

ՍՄՄ - Ս. Տարոնցի, Մեղրագետ, 1980:

ՎԴԱ - Վ. Դավոյան, Անքնություն, 1987:

ՎՏ - Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ.1, 1972, հ.2, 1973:

ВОПРОСЫ СТИЛИСТИЧЕСКОГО УПОТРЕБЛЕНИЯ АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ

____ Резюме ____

____ В. Мелконян ____

При рассмотрении авторских неологизмов в своей целостности как слоя словаря художественной речи, основным критерием их оценки должно стать установление их значимости и роли в обеспечении признаков речи: точность, сжатость, образность, разнообразие и т. д.